# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 19-ի թիվ 3 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/2**

«Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերում տեղի է ունեցել վրիպակ, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** 3-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «Գազ մեթան, տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներում որպես վառելիք օգտագործելու համար, որը փոխարինում է բենզինին: Ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների համար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից: Խառնուրդի մաքրում խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն, գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150C: Ըստ ՀՀ-ում գործող Տեխնիկական կանոնակարգի, ГОСТ 27577-2000: (Ավտոտրանսպորտային միջոցները բնական սեղմված գազով լցավորելու համար): Մատակարարումը կտրոններով: Մատակարարումը հարկավոր է, որպեսզի լինի Մեծամոր քաղաքից առավելագույնը 10 կմ հեռավորության վրա:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 09)
Էլ. փոստ՝ a.tadevosyan@promotion.am
Պատվիրատու՝ «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ